600.0521.06.12.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2017 թվականի №521Ա

քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ընտրանքային մոնիթորինգի արդյունքները, համաձայն որոնց՝ 2017 թվականի ապրիլ և մայիս ամիսներին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից դիմող անձանց ներկայացված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրերը (այսուհետ՝ Միացման պայմանագիր) չեն համապատասխանում տվյալ պահին գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 2-րդ հավելվածով հաստատված Միացման պայմանագրի օրինակելի ձևին,

բ) այն, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2017 թվականի հոկտեմբերի 16-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ վերը նշված փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) որ լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացման նպատակով վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 2 անգամ՝ 10-ական օրով,

ե) որ Կանոնների 13.3 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձին ներկայացվում է միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով մատակարարի կողմից ստորագրված Միացման պայմանագիրը 2 օրինակից՝ Կանոնների 2-րդ հավելվածով հաստատված օրինակելի ձևին համապատասխան,

ե) որ իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Կանոնների 13.3 կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ խախտելով որոշ սպառողների իրավունքները, և՝

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «գ» ենթակետը և 6-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 13.3-րդ կետի 2-րդ ենթակետը խախտելու համար Ընկերությանը ենթարկել տուգանքի՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
6 դեկտեմբերի 2017թ.